

Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCH
(EGYPTE) LE CAIRE

ԱՐՁԱՆԱՅՄ

ՊԱՏՄԱՆՔ

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ
Տարեկան գր. սպ 30
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Տարեկան գրանգ 10

Բաժանարար ՅԱԽԵԼՈՒՄ ցերեկ փոխարէն վճարումէ գերմ պիտի ըլլան .

Ձի հրահարակուսած ձեռագիրները
ևս չեն տրուիր :

ԱԶԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅՍՏՐԵՐԹ

ԳԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԾԱՐԱԹ ՕՐԵՐԸ


Թե՛ ԱՐՇԱԼՈՍՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց հարաւ պիտի ե ղիւնէր ներազուրոյթեան հասցեով քերթիս Մասակարարին , որ կ՛

ԳԻՏՈՐԻ ՓԱՓԱԶՆԵԱՆ

Բաժանորդագրութիւնը կանխիկ է . իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ :

ԱՐՏՈՆԵԱՆ . ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ԿՈՌԵՍՊՈՆԵՆՏԵՆ

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂՁ



ՀԱՆԳ . ՏԻՊՈՂԻ ԲԱՇԱ

ԱՐՏԱՐԻՆ ԳՈՐԾՈՑ ԸՍՆԱՐԱՐ ՆԻ ՍՏԵՆԱՊԵՏ ԵՐԵՍՓ . ԺՈՂՈՂՈՑ

Լիակատար կենսագրականը տեսնել՝ Սփինիս անունով գրքին մէջ :

Ա.Զ.Գ. - Մամուլի նոր կարգադրութեանց պատճառաւ Արշալոյս փոխանակ Շարաքի երկուշաբթի օրուան թիւ պիտի կրէ յիս ախտ :

ԱՊԱԳԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Շար . նախորդ թիւէն)

Արդ , այս վերահաս աղէտքին հանդէպ ինչպէս կ'ըլլայ որ Ատա նայի Առաջնորդը Պօլիս կ'ուղևորի արձակուրդով : Ո՞րպիսի կենսական խնդիր զինք հոն կը մղէր : Իրեն հողեւոր հայրն ու պետն եղող և իր մտքին միտնդ և զարգացում տալով զինք եպիսկոպոսութեան բարձր աստիճանին հասցնող պատրիարք Օրմանեանին իր որդիական և բարերարեակի երախտագիտութիւնը յայտնելով անոր օրհնութիւնը առ ներս կ'երթար : Իսկ «Փոռութեան Օճախը» արդէն հրատարակուած էր Ամբրիկայի «Ազգ» շաբաթաթերթին

մէջ , կեղծ ստորագրութեամբ մը , ինչ որ անըզգական քաջագործութիւն մ'է ... Մուշեղամիլինը անշուշտ պիտի առարկեն թէ ա՛յլ է անհաստական զգացումը , ա՛յլ է Ազգին և Հայութեան պահանջը : Հետեւաբար իր ազգասէրի պարտականութիւնը կատարեց Պատրիարքին և Պատրիարքարանի յաւատարմագրութի կենցաղը քողմերկելով : Թէ ո՞ր աստիճան ճշմարտութիւններ կան յիշեալ գրութեան մէջ չեմ գիտեր , բայց Պօլսոյ «Թիւզանդիտներ զոր իրաւունք ունինք լաւատեղեակ կարծելու Պատրիարքարանի մէջ անցած գարձածին , «որչափ խօսք այնչափ սուտ» կը պիտակէ Մուշեղ Սրբազանին հեղինակած «Փոռութեան Օճախը» : Այսու հանգերձ , ինչ որ ալ ըլլայ յիշեալ գրութեան երեւալուն շարժառիթը միթէ Ազգին և Հայութեան միևնոյն պահանջը՝ Ատանայի Առաջնորդը իր աթոռին վրայ բամբուլ չէ՞ր այդ փոթորկալից ժամանակներ :

Կիլիկիոյ վրայ առկա ձգք-

ուած Հախտեան շանթերը մեղի մասնանշեղէն եաքը իրեն՝ Ատանայի Առաջնորդին՝ դէպ ի Մայրաքաղաք ուղևորման առթիւ մեր բրած գիտողութեանց երեք պատճառաբանութիւն կարելի է ներկայացնել , ըստ իս . Առաջին՝ Սոյ Վեճ . Կաթիլիկոսին Կիլիկիոյ հողին վրայ գտնուելը . երկրորդ՝ կուսակալ Պահրի բաշային հայասիրութիւնը . երրորդ՝ իրեն՝ Մուշեղ եպիսկոպոսի՝ երեք տարի պաշտօնավարութեանէ ետքը օլափոխութեան պէտքը զգալը և կա՛ր ընտանեկան պարագաներ :

Կեռինը խնդրութիւններէ մաքրելու համար այս վերջին առարկութիւնը մէջ աեղէն վերցնենք , պատասխանելով թէ՛ վերջին առարկութիւնը , խիստ բանաւոր խաղաղ ժամանակներու հախար , բոլորովին անընդունելի է ցոյց տրուած հրաբլխային օրերուն մէջ : Ո՛չ անհատի մը , ո՛չ ալ ժողովոյ մը ներքին իրական արժանիք կամ հուսակոտորութիւնը , բերբաւոր կենսութիւն վտանգել միմիայն իր անպատասխան կամ իւրայնոց առաւել կամ նուազ գուեհիկ շահուն համար :

Կանք մնացած երկու պատճառաբանութեանց :

1. Վեճ . Կաթողիկոսին կիլիկիոյ հողին վրայ գտնուելը , Մեզ՝ Հայոցս համար՝ այս բարձրագոյն անճանալութեան թրքաց կողմէն տրուած կարեւորութիւնը , Հաճընի Կայմազաւիին և անոր փոխանորդին պէս ամենայնպէս պաշտօնեայի մը ն . Վեհափառութեան եղած անարգանքին մէջ միայն փնտռելու ըստիպուած ենք , առ ի չգոյն ուրիշ աւելի պատուաբեր յիշատակութեան Մուշեղ Սրբազանին գրքոյկին մէջ ... Արդ , այդ փնտաւորքին հետեւանք խոշոր զէրօ մ'է . ինչ որ թէ և ցաւալի և մեր արժանապատուութիւնը խորապէս վերաւորող բայց զարմանալի չէ՛ հանդէպ Հայութեան թրքաց տրամադրութիւնը այլևս քողմերկուած ըլլալով : Գոնէ՛ այդ անարդող ապիւրանները պատճառաւ ըլլային . բայց այդպիսի հատուցումի հետքն անգամ չկայ հատորիկին 63 էջերուն մէջ : Այս պարագային , յուսալ թէ ն . Վ . Կաթողիկոսը կարող պիտի ըլլար , ի պահանջել հարկին , ազդեցութիւն բանեցնել կուսակալին վրայ , գիտակցաբար օղին մէջ դրական շինելու ներքին ըսել է : Աս գնաց :

2. Կուսակալ Պահրի բաշային

հայասիրութիւնը . - Ապշեցուցիչ հայասիրութիւն . որ Հայութիւնը իր ծոցին մէջ կրող Հայաստանին անարդիւնեւորն դէ՛մ ճիկ մ'անցած չընենք ... Աւելի տաաջ չգայած , հարկ կը տեսնեմ՝ զբաւ անճանալուն մտածում մը պարզել : Ինչպէս ո՛չ մի հայ հաւատար չ'ունի թրքասէր կամ՝ քրքասէր կուսակալը իր մը վրայ , ես ալ էրէք չ'եմ ուրախանար այլ ընդհակառակն կը ստակամ երբ հայասէր կուսակալի մը վարչութեան տակ կը տեսնեմ նահանգ մը որուն բնակչութիւնը գտնէ մեծագոյն մասամբ հայ չէ . Մի որ և է ցեղը ուրիշ ցեղի մը գերագասող կուսակալի մը ի հարկէ աչառու պիտի ըլլայ , և ահա այդ կողմակցութեան շնորհիւ շիրքուած մասին ատելութիւնները կը կուտակուին . պատահ առիւի մը հեղեղանալու և սիրուած տարրը ցիրուցան ընելու համար : Մինչդեռ եթէ կուսակալը արդարաւոր միայն ըլլայ ինչ և ատելութիւն իրենց խանձարարին մէջ կը խեղդուին ի մեծ գոհունակութիւն ընդհանուրին : Ասկէց զատ եթէ մենք հայասէր նահանգապետներ միայն ունենալու յաւակնութիւննիս առաջ քշենք , թրքաց ալ թրքասէր կուսակալներ ունենալու իրաւունքը ինչպէս պիտի ուրանանք : Ո՞րն է միլիոն ճամբան ատելութեան այս շարժառիթները անհետացնելու . Ո՛չ ապաքէն խնդրել - և այս ամենայն իրաւունքով - որ կուսակալները ո՛չ հայասէր , ո՛չ թրքասէր այլ միմիայն արդարասէր ըլլան : Սյուս հանգերձ , Մուշեղ եպիսկոպոսի կողմէն մասնաւորաբար իբրև հայասէրներ կայացուած Պահրի բաշան աւելի Մուշեղասէր կ'երևի քան այլ ինչ , ըստ Ատանայի Առաջնորդին իսկ վկայութեան , և միթէ զայս չե՞ն հաստատար յետագայ տողերը :

«... իմ և Պահրի բաշայի միջև գոյութիւն ունեցող այդ բարեկամութիւնը և այդ բարեկամութեան շնորհիւ կառավարական շըրջանակներու մէջ մեր Առաջնորդարանին ձեռք բերած հեղինակութիւնը պատճառ եղաւ որ Պահրի բաշայի դէմ նիւթուած ամբաստանութիւններուն իմ անունս ալ կրցուէր շարունակուի : Եւ թերևս ալ ամբողջ Հայութիւնը ամբաստանուէր ...»

Ինչ որ ալ ըլլայ Պահրի բաշան , հայասէր կամ Առաջնորդին բարեկամ , տեսանք որ Նըլլուրդի ստիպումին տակ պահ մը վարանու մի և վհատութեան նշաններ ցոյց

տուաւ, այն աստիճանն որ կրկնական
այն աստիճանը պիտի շարքուէր եթէ
Մուշեղ եպիսկոպոս վերագրեալ կըտ-
րուէ և կորովի միջամտութիւնը Ը-
րած չ'ըլլար. միջամտութիւնն ու-
րուն վերջին բառերը մարդս մտա-
ծուցներու մէջ կ'ընկղմէ...

Յայտնի է ուրեմն որ ոչ թէ
կուսակալին հայաստանութիւնը ազա-
տեց կրկնական այլ Սրբազանը ան-
ձամբ կատարեալ շանթարգելի
պատուաբեր և օրինակելի դեր մը
կատարած էր այդ միջոցին, և ա-
հա այդ պատուական անձն է որ
արձակուրդով Պոլսու կ'երթայ՝ իր
թեմը այս տեսակ ճգնաժամային
վիճակին մէջ ձգելով: Ճգնաժա-
մայինը չափազանցութիւն չէ: Երբ
կաթողիկոսը, Առաջնորդը և առաջ-
նորդական փոխանորդը կառավա-
րչիներու և պիտուորական հրամա-
նատարներու թշնամութեան կ'են-
թարկուին, անդին ինչո՞ք ժողովուր-
դը ո՞վ գիտէ սրբաբար խոզոտ-
թեանց մատնուած էր: Եւ Առաջ-
նորդը այս բաները գիտնալով հան-
դերձ կը հեռանար իր ամբողջ...
Ահա այս բանն է որ ասկէ առաջ
քանիցս ըսել տուաւ ինծի վըր տըխ-
րինք...:

(Շարունակելի) ԱՄԵՆՈՒՄ

ԶԱՅ ԳՐԱՂՆԵՐ

Նրբանկար ու ճաճանչագեղ եւ գու-
նատիպ կողքով մը կսկսի Ռուսահայ Պա-
րոնայք Դ. Աղաեանցի, Աւետիս Ահա-
րոնեանի, Յովհաննէս Թուրանեանի եւ
Վրթանէս Փափագեանի կազմած ՀԱՅ
Գրողներու Ա. մասը, 688ը մեծագիրը
էջերէ բաղկացած, զոր Թիֆլիզիցիական
մեծանուն Հեղինակներէն ստանալու
պատիւը ունեցած է «Արշալոյս»ի խմբ-
բազրութիւնը:

Գրքին բովանդակութիւնը տալէ
յետոյ, նախնական էջերուն մէջ ուսու-
ցիչներու կողմէն իրենց խօսքը հո-
յակապ հատորին կազմողները, ու Ռու-
սահայ Գրողներու կը վերածեն փառա-
ւոր կողքին վրայ գրուած գեղատառ
թուղթի «Հայ գրողներ» տիտղոսը:

Թո՞ղ այնպէս ըլլայ. իրենք ալ
մեր արիւնքն չեն. մենք չենք նա-
խանձիր, ամեն հայ կրնայ լաւ գործ
մը ընել: ու «Հայ գրողներ» հատորը
կազմողները լաւ գործ մը ըրած են. ե-
թէ նոյն իսկ իրենք կողքէն չորս էջ
անդին volte faceով մը Ռուսահայ գը-
րողներու մասնաւորած ըլլան իրենց
կազմած գրքին տիտղոսը:

Թողցիկ ակնարկ մը բաւական
չէ վերլուծելու մեծահատոր գրքին ար-
ժանիքը: Միմիայն սքանչելատիպ եւ
յաջողած նկարները թերթիւնու համար
իսկ, մասեր պէտք են:

Ազան ընթերցող մը, արդէն զըր-
քին պարունակութեանցը մաս առ մաս
զանազան հատորներու մէջ հանդիպած
ըլլալով, նկարներուն աւելի հետամուտ
պիտի ըլլայ քան նիւթերուն, որոնք
ամենն ալ պէտք է խոստովանիլ սա-
կայն՝ ընտրութեամբ գրուած են արդէն:

Պ. Աղաեանց՝ իր պատկառելի
այնխառն մօրով քով ու շանթարգող
նայուածքով՝ յատկապէս զիրքը գրա-
ւած է. ստուգարանատոր գրքին ամբողջ
պատասխանատուութիւններն իր սու-
րիքոտ ուսին վրայ վերցնելով...:

Իր գրածներէն «Յայտնութիւն»
(ըստ Յովհաննէս) նշանակալից հոտ-
ուած մէջ, «Արեգնազան» եւ «Տորք-
անգեղը» խորհրդաւոր նիւթեր կը պա-
րունակին, որոնք արդէն իրենց մաս-
նաւոր տեղերը գրուած են հայ յրա-
կանութեան մէջ:

Պրն. Աղաեանցին կը հետեւին,
իրենց մտքի սիրուն պաշարներովը,
2. Յովհաննէս Թուրանեան, «Անուշը»

(Համբարձման գիշերը) նախագահ
մէջ, հինն ու նորը շօշափող:
«Պօչան ու մուսան» ներշնչող
հատուած մէջ,
«Դէպի անհունը» արդէն գնահատ-
ուած:

3. Վրդանէս Փափագեան. «Մոլոր
վրան» եւ «Գիշերային ժամերգութիւն»
հատուածներով մտքերը կը խարազանէ,
ու «Եղբորդ» շատ բաներ կ'ըսէ անդ-
րագրածը մտքերու:

«Մեկի գէղջիւղ» զեղեցիկ գրուած
մէջ, հրահանգիչ եւ ըմբոստացնող:
«Կորուած արգարութիւնը» սոսա-
շին բառէն իսկ կը ցնցէ ընթերցողը.
«Այսպէս եր անս, որ քոռնցիկ ու ու-
կին գնացին արդարաբիւրս որոնելու...
եւ յիտ գնում են»
«Թող գնան»

4. Աւետիք Բաճակեան. - Աւետի-
քարք մը բանաստեղծութիւններու, ո-
րոնք կեանքը կը պատկերեն սեղմուած
հատուածներու մէջ:
5. Շիրվանզատէ. - «Աւետիք»
«Կրակ» գլուխ գլուխ գործոցներ են
փեն յերոններու:

«Այլ եւս Միրաբեանը ոչինչ չ'ա-
սաց եւ փակեց հանգիստ վառարանի դռ-
նակը...»
6. Յ. Յովհաննէսեան. - Փուշ մը
ուսի բանաստեղծութիւններու:
7. Առաքել Բարախանեան (Լէօ)
«Պանդուխտը» իր պարզութեամբ մէջ
շատ բաներ կ'ըսէ մեզի: «Այժարածը»
խորհրդաւոր թեւադրանքներու տողա-
շար մէջ:

8. Շուշանիկ Կերբեղեան. - Բա-
նաստեղծութիւններու շարք մը:
«Աշնան արտի ֆարուանկ եկա՛ւ՝
երկինք, երկիր սեւ հագան,
Քաւին զարդէն արեւ իմկաւ,
«Աստղով, յուսին սո՛ւս հանգան»
9. Գէորգ Բաշինջաղեանի «Աւ-
անի լիճը» «Պարբալի ձորը» «Մանուկ-
ներ եւ ծաղիկներ» կարգաւու արժանի
կտորներ են:

10. Վահան Միրաբեան. - Ամէն
կզանակի յարմարող համայնատեւի
վազը մը ուսի իր տողերուն մէջ:
«Ձեռքս ինձն
Բիկից դուրս գալը,
Մարտը ուսիդ
Մարին սուտը.
Ա՛յս, եղ արշերիդ
Վառվառն ինձը»

11. Սարգիս Մուրադեան (Ա-
տրպետ) պատմական հատուած մը
«Մպտեալ Սուրբանը», անկարելի է
չ'կարգալ ծայրէ ի ծայր:
12. Յակոբ Յակոբեան. - Բանաս-
տեղծութիւններ. «Կաթնավարը»
«Եւ մի սեւ օր էլ կարսան պայքերով
Եղն կարսաւարին կը գրի կեանքից.
Հալալ է՛ն հալը, ով արեան գնով
Կը խի ճրակ հնոցի կրծիցի»

13. - Միքայէլ Յովհաննիսեան
(Նարդոս) «Նեղ օրերից մէկը» գնահա-
տելի պատկեր մ'է կեանքի:
14. - Ալէքսանդր Մատուրեան. -
բանաստեղծութիւններ:
«Բայց մի՛ վնասիր... թո՞ղ խորին հուս
Դե՛ռ այնքան քն սանջուած հոգին»

15. - Աւետիս Ահարոնեան. - «Ա-
բաղաղը» «Մարտիքը», «Լա՛ց, պատաւ,
լաց. Մեծ ճանապարհին», «Վեհաբիկի
գիշերը» «Վերջին դատաստանը», կը-
տորներ են, որոնց վրայ անուշապիթ
աչքով նայիլ ըլլալը:
16. Լեւոն Մանէլեան. - բանաս-
տեղծութիւններ «Անդրբարձորը»
«Անթրոյնը մի օր յայնձնուէ կ'ըսէ,
-մեր կուտը իմկաւ, Նըրս փոխարեւ
Շինիր մեզ համար նոր կուտ, նոր արձան»

17. Գրիգոր Տէր Յովհաննէսեան
(Մուրազյան) «Նոյն պոռուը» հատուած
մէջ ուր շատ բաներ կան խոկալու հա-
մար:
18. Ռաֆայէլ Պատկանեան. (Գա-
մառ-քաթիկոս) ընդհանրացած անուն
մը, Բաղմաթիւ են իր գրածները.
Բայց երկու տող մեր էջերուն համար.
Եւ զարդ վնեւ, զարդու սեւ ու պէս պէս
Բայց չեն ծնունդ մեր այնքա՛ր կարճասէս.

Սեր եւ սեայ անխելովալ այս ուշխարն,
Քաւի ղոպի բախը ծպսց ինձ պայծառ:
Փառասէքը՝ զանձերու բանալի մ'է:
19. Միքայէլ Նարբեան.
Ո՞վ իմ դասիկ, հանգիս կեցիր
Իս մեծասան մի սուտ կը:
Որ իր օրով իր կեանքով
Խիղճ ասածը չի գիտեր
Աղբասները նրա դռնից
Գիշեր ցարիկ հալածուած
Մի մարդ ջիւր նրան ծախօր՝
Որ չի յիներ վշտացած:

20. Ռաֆֆի. - Սիրելի անուն մը,
որ սակայն՝ իր Տէր Աւետիքովը (տե՛ս
Դաւիթ Բէկ) վանքերն ու եկեղեցիներ-
ը կողոպտելու սորվեցուց մեզի, այն-
պէս որ՝ հիմայ, էջերու գողերը, եկե-
ղեցի կողոպտողները, խաչագողները,
խարբարներն ու խայտառակ ստախոս-
ները ազգին արգարութեան աթոռնե-
րուն վրայ բազմեցան, ու մեր ազգին
մուրը պիտի մարեն:
Յարգանք իր յիշատակին եւ հան-
գիստ ոսկորներուն:
21. - Սմբատ Շահազիզ. - «Երազ»
«Կարկայանն աղբար այնչեղ,
Թաւաղուէր մարգարիչ,
Նա յստակ էր որպէս թիւրիչ,
Այն կ'ըսէ՛ր զեղբարսիս»

22. - Պերճ Պաօշեանց. - Բարեկեն-
դանը՝ կարգաւու է:
23. - Մաշտոց Արմուշեան. - Վերջ
Հայաստանի. (Աղա՛սի, մեր դեկ հաս ա
ֆեզ նեւն մեկն էլ ա չի՛ր քնակ գա՛լ. ստու
էին քանակաւորին ու խնդրու՛, ուրախ
սնուն, ծափ սաղիս...)

24. - Գարբէլ Սուրբակեանց.
Պեպօ՛ արդէն գնահատուած է հայերէն
ու օտարազգիներէն:
Ու հոս կը վերջանայ Հայ գրողնե-
րու, կամ աւելի շեռակը՝ Ռուսահայ գը-
րողներու հատորին առաջին մասը, որ
Թղթաանց
Ե. ԹՐՈՍԵԱՆ
Հասցէն
Կիւթից մայրի Գրադատանոց
Թիֆլիզ

Գին 2 բուրլի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ ՄԸ

Առ որ անկ է...

Մեր կզերներէն շատերուն, ան-
գիտակցաբար իրենց կեղեցական պար-
տականութիւնները եւ հրապարակու-
տուած երգումները մոռցած, արգիական
ազգաբանի հոսանքն տարուած՝ ա-
մենաթույլ վերաբերում մը ցոյց տալը
հանդէպ մեր զարասոր կեղեցեւոյն ու
իրենց խնամոց վտանգուած թողուր-
քին ուշադրութիւնէ վերաբերի պարս-
գայ մը չէ:

Բայց այդ կարգի մեղկացած ու
պարտազանց կեղեցականներուն շա-
ռաշուն ապտակը կուտան Ամեն. Սըր-
բաղան Պատրիարք հայրը, եւ Պոլսոյ
կեղր, Գրոն, ժողովոյ Ատենապետ Գեորգ
Տ. Հմայեակ եպս. Դիմաքսեան, իրենց
վճարական մէկ կարգադրութեամբը, Լա-
սին մայրապետներու ճանկը ինկած
անչափահաս հայ ՈՐՍուկի մը փրկելով
անոնց ճիւղաններէն:

Միջպէպը հետեւեալն է:
Գառըզիզի մայրապետներու վար-
վարժարանը կը յաճախէ Պատրիարք Բա-
րուսականեան՝ Քրիստոսի ուսանելու հա-
մար՝ սակայն եղբակացութիւնը ազլ-
կան զէպի մայրապետութիւն հակուր
կըլլայ, հակառակ իր մօրը՝ քրոջը եւ
եղբորը կամքին, ու աւելի զարմանա-
լին հակառակ մօրը ըրած զիմուսներուն
թէ ազլիկը անչափահաս է, մայրապետ-
ները կուզեն եղբր զայն Մարտիրոս՝ եւ
անկէ ալ ուրիշ սեղ փոխարեւը, ու
այս մտքով ազլիկը չողենաւ առաջնոր-
դելու տեսն՝ մայրը, քոյրը եւ եղբայ-
րը յարձակուումով կը կեցնեն փոխարգա-
կառքը:

Փոթորիկը կը մեծայ եւ այսպէս
գործը Բերայի կառավարչին ձեռքը կը
հասնի. որուն իրենց օրը յանձնելու

կընդդիմանան մայրապետները 7 օտա-
րանպատակութիւններն պատճառելով:
Կառավարիչը՝ ինչպէս կերեւի, հա-
մողուած թէ Օսման. հպատակներն ալ
միեւնոյն պաշտպանութիւնը վայելելու
իրաւունք ունին, հրաման ըրած է որ
ազլիկը իրեն բերեն, ինչ որ գործադ-
րած են ստականները:
Յորդորներ կարգաւու յետոյ՝ որոնք
ապարդուն կը թողուն ազլիկան կողմէ՝
կառավարիչը խնդրոյն զուտ կրօնական
հանգամանքը ի նկատի ունենալով,
Բերայի կեղեցիկն կը զրկէ ազլիկը իր
բարեկերու հետ:

Բանաստեղծ անօգուտ յորդորներէն
յետոյ, Գեորգ Տէր Հմայեակ կեղեցական
կը հասնի եւ իր կողմէ ալ խրատական-
ներ կը խօսի ազլիկանը. որ զարձեալ
իր մայրապետացուի գաղափարին մէջ
անդրուելի կը մնայ. եւ միւս կողմէ
տրուած յորդորականներն ալ կը թարգ-
մանէ մայրապետներուն, այնպէս որ Ն.
Գեորգապատեթիւն գառն շեշտելով կ'ա-
ւելցնէ. «ազլիկս. քանի որ մեր ը-
սածները կը հաղորդու մայրապետներուն
ըսէ՛ նաեւ իրենց թէ՛ ֆրիստեւայ անու-
նին սակ, վայելելիներուն չըրածը կընեն
կոր. Արիւնը վաղու ազգի մը արհն վը-
րայ այսչափ չեն կրնար:» Ու ազլիկը
վար կը զնէ՝ բանակներ ալ զուտ պա-
րագային չի յանձնելու որոշումով, եւ
ուստի շնորհունակ մայրապետները՝ ո-
րոնք իրենց օրէն բաժնուրի չեն ուզեր՝
գլխիկոր եւ առանց ետեւին նայելու
ճամբու կը գրուին:

Գալով համոզուած մայրապետ-
ցոյն՝ տէր Հմայեակ քահանային եւ
ժամկոչի մը ընկերակցութեամբ կառք
մը գրուելով Ս. Պատրիարքին կը զըր-
կուի, որ տեսնելով թէ՛ ազլիկը իր
մայրապետութիւնը փոխել չուզեր, հրաման
կընէ որ ծնողքին տունը փոխադրեն
զայն:

Անոնք որ ինքնընտիր օտարահը-
պատակներու եւ շարվածան լուսնաթի-
զեօն... ներու ձեռքէն ազլիկ մը
փրկելով իր ծնողքին չկրցան յանձնել
Գահիրէի մէջ, այս փառաւոր դասէն
կրնան իրենց բաժին հանել:

Վ. ԱՐԻԱՆ Գ. ԲՐՈՒՏԵԱՆ

**ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԷՆ
(ՎԱՐՄԱԳԵՏԸ)
ԲՈՆԱՊԵՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՍՈՆՈՂԱԾ**

Սոյն խիստ հետաքրքրաշարժ ի-
րավէպը Մամլոյ տակ է. եւ ներկայ
ամսոյ վերջերը լոյս կը տեսնայ «Ար-
շալոյս»ի Տպարանէն:

Անոնք որ զաւանդուած մէջ զոր-
ծուած խոզոտութեանց եւ պաշտօնական
մեքենայութեանց գրուածներուն ծա-
նոթանալ կը փափաքին, «Տառապան-
քի Աշխարհէն» ու ամենէն ցայտուն ծա-
նոթութիւնները պիտի տայ իրենց:

ԳԻՆ 2ՈՐՍ ԴՐՇ. ՈՂԶ
Հատուած կարելու մաս մը գա-
ւառներու աղքատիկ վարժարաններուն
պիտի զրկուի սոյն հրատարակութեան
շահակեցներուն որոշումովը:

ԳԱՍՏԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ԳԱՍՏԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿՍԵՆՈ
ՎԱՐՄԱՐԱՆԱՑ
ԳԱՆԻՔԷ**

Ա. Զ. Գ.

Հոգաբարձութիւնս պատիւ ու-
նի ծանուցանելու Գահիրէի յար-
գելի հայ հասարակութեան և ծը-
նողաց թէ՛ Գալստեան Ազգ. երկ-
սեռ վտարանաց վերաբացումը
քանի մը շարվածան և ոչ թէ
քանի մ'ամիսներու համար յետա-
ձգուած է. ինչպէս որ ոմանք սը-
խալամբ կենթադրեն:

Ի դիմաց Վարժ. առժ. Հոգա-
բարձութեան
Ատենապետ
ՄԻՔ. ՆԱԹԱՆԵԱՆ Գ. ԱԶԵԱԿՈՐ

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ

Պատ. Խմբագրութիւն
«Արշալոյս» Հայաստանի
Ի Գաղափար
Ձեր թերթին նախորդ թիւերն մէջ
կարգապետ նորին ստորագրութեամբ
նամակ մը կարգացրի, որ՝ ի նպատակ
Գահիրէի Ազգայնական Ընկերութեան,
մեր միջոցաւ նոր հրատարակ հանուած
վիճակահանութեան մասին կը խօսէր :

Գրուածները մեծագոյն մասամբ
ստուգութիւններ էին, եւ արդարեւ
այս նոր վիճակահանութիւնը շատ մը
առաւելութիւններ ունի պարզեցնելու
քանակին, եւ վճարումը առանց զեղջի
կատարուելուն տեսակէտներով :

Բաժանորդագրութեան (պօստի)
խնդրոյն գալով, գործնաւոր յարմարաւ
էր կարգապետութիւններ եղած են :

Ամենէն նուազագոյն թիւը 25
տոմս ըլլալով, բաժանորդագրուելու
զողը կրնայ մէկ ամիսէն մինչեւ մէկ
տարուան համար արձանագրուել յար-
մարագոյն զեղջով մը :

Բայց միայն լաւ կարգապետութիւն-
ներ ընելը բաւական չէ : Գործին յա-
ջողութիւնը կը պահանջէ որ հայրենա-
կիցները, որոնցմէ շատերը այլ եւ այլ
տոմսեր կը գնեն, իրենց ներկայացող
բոլոր տոմսավճարներէն ալ, նոր հը-
րատարակ ելած մեր տոմսերէն ուզեն,
որպէսզի անոնք պէտք ունենան մեր
տոմսերէն ալ գնելու եւ այսպէսով գոր-
ծը յառաջդիմէ : Ասիկայ ալ տեսակ մը
ազգայնորութիւն է, որ մեր ազգային-
ները կրնան ցոյց տալ, առանց բան
մը կորսնցնելու :

Եւ ամենէն զնահատելին այն է
որ, մէկ տոմս ունեցողը, քանի մը
անգամէն անպատճառ պարգեւ մը ըս-
տանալու 30 առ հարիւր նաւանկահանու-
թիւն ունի մեր վիճակահանութեան մէջ :

Մեծ յոյս ունիմք թէ՛ մեր ազգա-
յինները նախապատուութիւն ընծայե-
լով մեր տոմսերուն, ազգային արժա-
նապատուութիւնն ալ միանգամայն
վեր բռնելու փափագ ցոյց պիտի տան :

Ներկայացուցիչ վիճակահանութեան
ՍՍ.Գ.Ի.Ս ՄԻՒՏԻՆԻՐԵՆ
Գահիրէ 3 Սեպտ. 909

Յ. Գ. Աւելորդ չ'պիտի ըլլայ յի-
շեցնել թէ՛ մեր կեղերնավայրն է,
էօզպէթիյէ Վակի - էլ պիտի փողոց
թիւ 68 :

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Տէ՛ր Խմբագիր
«Արշալոյս» Հայաստանի
Ի Գաղափար
(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)
Գործնաւոր, եթէ՛ այդ ոճիւրին թե-
ւազրիջները մենք էինք ինչո՞ւ տեղա-
կան կառավարութիւնը եւ զմեզ ամ-
բողոքաբար ու զրպարտող թշնամիները
(որոնցմէ մէկն է նաեւ յիշեալ «Հրայ-
րը») չը կրցան ապացուցանել (1) ցարդ,
եւ երբ պաշտօնապէս օրէնքով ապա-
ցուցուած է յիշեալ Մզրբայրին ոճրա-
գործ ըլլալն առանց ո՛ր եւ է մէկէ մը
թիկազրուած ըլլալու, ո՞ր իրաւամբ
Երուսաղէմի հարամի «Հրայր»ը զմեզ
կը զրպարտէ դեռ :

(1) Մ. Խ. - Շատ քիչ կը պա-
տահի որ ոճիւրները արեւի տակ եւ
յայտնի գործունէն եւ ոճրագործները
համարձակօրէն խոստովանին իրենց
ոճիրը : Շատ անգամ դաշտը ձեռ-

Երուսաղէմի յիշեալ ստախոս ու
անխիղճ նամակագիրը առանց չի կնե-
լու ու Աստուծոյ վիճակաւու. «ժանօթ
ոճրագործ» «մարգասպան» կանուանէ
այնպիսի մէկը որ այսօր ամեն ազգէ
սիրուած բարեխիտ ու ազգասէր զէմք
մըն է. եթէ ժանօթ ոճրագործ մ'էր
այդ անձը ինք հայ մ'ըլլալով մանա-
ւանդ, ինչո՞ւ կառավարութիւնը Ա. ք-
եա կամ Ռասոս չ'աքսորեր զայն, պէտք
է որ «Հրայր անօր» ծանօթ ոճրագործ
մ'ըլլալն հաստատէ, իր իսկական ըս-
տորագրութեամբ որ իր արժէքն ունե-
նայ :

Այդ զրպարտիչ նամակագիրը Ե-
ֆա մնացած ըլլալով հոնդերձ, ինչպէս
կանգլիտանայ ու չի յիշեր թէ՞ Պ. Յով-
հաննէս Գրիգորեան այսօր 10,000 ոս-
կի վարկ ունենալով հրապարակին
վրայ՝ նարինջի վաճառական մ'է ինք
ու աշարի գործ կընէ (2), որ միեւ-
նոյն ատեն իթթիխտի գոմիթէի ալ
պատուաւոր անդամներէն է, ու անգործ
կանուանէ զայն, ինչպէս նաեւ Քրիս-
եանի պէս ընտանեակէր. որովհետեւ
մէկը կը զրպարտէ. որովհետեւ Հրայր
մտոցած է իր անցեալը որ հակառակ իր

քը բռնուած ոճրագործն անգամ
արդարութեան ձեռքէն ճողոպրելու
համար ուրացումներու դիմած է,
ու այս պարագային՝ հաւանականու-
թիւններու կրթնելով է որ կը գործ-
ծեն արդարութեան պաշտօնեաները :
ու քիչ անգամ կը սխալին :

Հրայր՝ Գործընդին վարդապետի
ոճրոյն վրայ խօսելու ատեն, չէր
մոռցած նաեւ Ամեն. Տ. Յարութիւն
Պատրիարքին ուղղուած սպանական
հեռագիրը ձեզմէ զրկուած, Գործ-
ընդին վարդապետը երուսաղէմ կոչե-
լու համար « ապա թէ ոչ . . . » :

Բաւական զորաւոր ապացոյց
չէ՞ ասիկայ ձեզ ամբաստանութեան
ենթարկելու, եւ աւելի զարմանա-
լի չէ՞ ձեր սպասելը՝ որ անոնք
ոճրագործները կամ կասկածելիներ-
ը մատնացոյց չ'ընելով՝ օրէնքին
առջեւ պատասխանատու մնան իբրև
մեղաւոր :

Ապացոյց կ'ըսէք Տ. Մանու-
եան. ձեր ստորագրութեան ներքեւ
ըսած էք թէ՛ Հոգեւոյս Տէր Աւետի-
կայիկոպոս Եիշմանեան ոչ թէ մե-
ռաւ՝ այլ մեռցուցին . . . ձեր գրա-
ծը մենք ալ պիտի կրկնենք. բայց
զիտէք որ այդ առթիւ ուրիշ մէջ
տեղ գտնուած ապացոյցները ջնջե-
լու համար նիւթական ինչ կարե-
ւոր զոհողութիւններ ալ եղան . . .
Փախստական խմբակին եզրպետուի
նեղակայացուցիչները ու մեզի ծանօթ
անոնց բոլոր ազգականներն ալ մի-
ասին ինչ « մեծ գործ » երու վրայ
գտնուեցան ու քիթիներին բերանին
պըլչիկեցու : Աւ դարձեալ տեսնենք
ժամանակը ինչե՞ր պիտի խօսի այս
մասին. այդ ապացոյցները ջնջելու
համար հիմայ արտակարգ ուժերու
պէտք կայ . . .

(2) Մ. Խ. - Ոսկիներու վարկն
ու պատիւը մենք այնպէս չենք
ըմբռնել ինչպէս դուք կուզէք

նուիրական կոչումին երբ իր ընկերնե-
րով զինուած Եփաթ իջած էր. Եփա-
թի վանքին մէջ ապաստանող հաշուե-
պահանջները հալածելու համար. իր
վրայէն հրազէնը առնող Քրիսեանը ե-
ղած էր որ Ազգ. քննիչներուն ալ
ցոյց տուաւ զայն (3) :

Զրպարտիչ ու կատարեալ ստախոս
Երուսաղէմի այդ անբարոյ (4), վա-
նականը առանց չի կնեցու ինքնարեւ-
բար. իբր Մատթէոս Վրդ. Գայրգճե-
նէ մեզ ուղղակի կեղծ նամակ մ'ալ յի-
րիւրած էր իր գրութեան մէջ, որով
իբր թէ՛ Մատթէոս Վրդ. խորհուրդ
տուած է եղեր մեզ Գործընդին Վրդ. ը
ոպանելու, ինչպէս - հոգի պիտի տաս
Աստուծոյ, ո՞վ ստախոս «Հրայր» - ո՞վ
տեսեր է այդ նամակը. ինչո՞ւ անուշը
չէր յիշած, իբր ապացոյց իր գրածին,
եւ կամ այդքան կարեւոր խնդրոյ մը
համար, ինչո՞ւ կէթ «Արշալոյս»-ի նըմ-
բագրութիւնը՝ առանց չի նմու նամակին
բնագիրն իր աչքին առջեւ ունենալու
նախաձեռնած էր (5) այդ չարաստու-

ըմբռնել : Մեծատուն աւազակներու
չատ հանդիպած ենք մեր ընթեր-
ցումներուն ու կեանքի ընթացքին
մէջ . Պ. Գրիգորեան կրնայ վարկ
ուրեմալ, կրնայ նարինջի վաճառա-
կան եղած ըլլալ, կրնայ ա շ ա թ ի
գործ ընել՝ եւ բարոյականը կասկա-
ծելի ըլլալուն համար կառավարու-
թեան անվստահութիւնը դրուել,
ինչպէս որ եղած է ձեր գրածներուն
ալ նայելով : Իսկ գոմիթէներու մէջ
ա՛յնպիսի անգամներ կը ճանչնանք
ո՛՛՛ր . . . :

(3) Մ. Խ. - Հրայրին զէնք կը-
րելը յանցանք մը չենք կարծեր որ
ըլլայ. մարդ երբ վտանգը հաւա-
նական երեցած ճամբորդութիւն մը
ընելու ստիպուած է, անձնապաշա-
պանութեան համար կանխապէս յիշ-
միջոցներ ձեռք առնելու է. այս է
եղած աշխարհի ընդհանրացած օրէն-
քը : Բայց ինչպէս կրնանք վստահ
ըլլալ թէ՛ մէլիսանէճի Քրիսեանին
առարկած հրազէնը Հրայրին էր :
Փանիւր վտանքանդ ու ազգակործան
« մէմլուք » ներքը նպատակներուն հաս-
նելու համար միջոցին մէջ խտրու-
թիւն չեն դներ. Իսկ ազգային քըն-
նիչները յայտնապէս Պ Եփեսոսեան
սակի ի ֆալա ին կը հետեւին . . . :

(4) Մ. Խ. - Ձեր անբարոյ ըն-
դունած վանականը շատո՞նց կը
ճանչնանք. անոր անբարոյականու-
թեանը ինչ ապացոյց ունիք. գո-
նէ «մանուար» նամակաւ մը թուէ-
իք մեզի : Մե՞նք ինչու անոր ան-
բարոյութեան տեղեկութիւն չու-
նինք : Եթէ այդպիսի բան մը դո-
յութիւն ունէր, Գայրգճեան Վար-
դապետին եղբայրը, կամ Գաղա-
կանները, որ հոս կը գտնուին,
պէտք էր որ զգուշացնէին մեզի . . .

(5) Մ. Խ. - Ընդգծումը մեր
կողմէն է . Պ. Մանուեան, դուք
այդ բառը մեզի դէմ գործածելու

թիւները իր թերթին մէջ հիւրընկա-
լել : Շիտակը «Արշալոյս»-ի Խմբագիրը
այդքան միամիտ չէինք կարծեր. եւ
կամ թէ յասուի (6) հրատարակած էր
զայն :

Պէտք է որ այդ Երուսաղէմէն Ձեզ
գրող ստախոս եւ նենգամիտ Հրայրը
հրապարակաւ իր ստորագրութեան տակ
հերքէ իր բոլոր այդ գրութիւնը ծայ-
րէ ի ծայր, զի բացարձակ ստույթեան
չազախ մըն է եւ բուն ոճրագործի գործ
մարդս բարոյապէս մեղքներու նպատա-
կով գրած : Հակառակ պարագային
պիտի ստիպուենք մեր պատուոյն վե-
րանաստատութեան համար տեղոյդ Ե-
զրիպական իշխանութեան առջեւ ուղ-
ղակի Ձեր անձին գէմ դատ բանալ եւ
անոր միջոցաւ ստուգել թէ՛ արդարեւ
բուն ոճրագործը ո՞վ է եղեր, որ դի-
մակի տակ ծածկուած ստոր անոր կատ-
ւոյն հետ կը խաղայ անստույգութեամբ.
մինչեւ երկու ամիս պայմանագրով (7)

Կապանք :
ՅԱՐ. ՍՐԿ. ՄԱՆԱԿԻԱՆ


համար, ձեր՝ ժամանակաւ մեզի
բարեկամ եղբոր տուած հաւաս-
տաններուն ապաւինած էք : Բայց
զիտցէք որ ձեր այդ սուտացէք :
Եանն ախորհուրդներու դէմ յախուեն
կուռող մը եղած է ան : Վկայ են
«Արշալոյս» 1908ի թիւերուն մէջ
Ասիին գրած յօդուածներն . . . :

(6) Մ. Խ. - Մենք « յատուկ
հաշիւներու չունինք » : «Արշալոյս» Ան-
կիս է բոլոր կուսակցութիւններէն
ալ . . . Այն կուսակցութիւնը՝ որ
լաւ հաշուրուած ազնիւ ձեռնարկ
մը կ'ընէ, կը համակրենք. անոնք
որ վատ գործ մը կ'ընեն, գոլթս-
տի բառ մը իսկ չունինք անոնց հա-
մար : Պարտաւին գալով՝ անողորմ
պիտի մնանք . . . :

Եթէ կը յիշէ՛ք, Երուսաղէմի
մէջ ձեր վրայ եղած յարձակումի մը
պաշտպան կեցած է «Արշալոյս» իր
Սաղիմայ թղթակիցներէն յարգելի
մէկուն տուած հաւաստեայը վրայ :
Բայց ինչո՞ւ չ'արդարացուցիք ձեր
վրայ դրուած յոյսերը : Ձեր նամա-
կին մէջ մեզի դէմ գործածած ան-
խոհեմ բառերը անգամ կապացու-
ցանեն թէ՛ դուք արժանի չէիք ո՛չ
Սաղիմայ յարգելի մեր աշխատակ-
ցին եւ ո՛չ ալ մեր համակրանայ :
որուն՝ Մեմ ԵՄԱՐԱԶԵՂ ՄԱՍՏՈՒ-
ԹԵԱՆ . . . շնորհիւ՝ արժանացաք :

(7) Մ. Խ. - Առատապարզեւ
չնոր՛ մը ըրած էք երկու ամիս
պայմանագրով չնոր՛եցով մեզի : Ա-
ճապարեցէք այժմէն իսկ բանալ դա-
տը, որովհետեւ եզրպետական կառա-
վարութիւնը պէտք պիտի ունենայ
ստուգելու թէ՛ 1905էն մինչեւ 1908ը
զեղծարար եւ փախստական վարդա-
պետներուն Սաղիմայ գանձէն ան-
հաշուելիօրէն չուսլած 10,000 ոս-
կիէն ո՞րչափը եզրպետու զրկուած
է : Վեհափառ Մատթէոս կաթողի-

Մանուկութեան շարունակութիւն չե-
նողի իւ Ազգային տե՛ն 4րդ երեսը :



ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՊԵԱՆ

ՇԱՐԱ ՄՕՀԱՄՄԵՏ ԱԼԻ, ՏԱՐՊ - ԷԼ - ԷՆԱՊԱ ԹԻԻ 1

ԿԷՄԷ ԷԼ ԿՈՒՂՐԱՄ ՄԶԿԻԹԻՆ ԺՆՇՏ ԴԻՄԱՑ

Երկար տարիներ կարևոր տուներու մէջ աշխատելով փորձառութիւն ստանալէ յետոյ, այժմ իր սեփական վաճառատունը ունի, ուր՝
կը վաճառուին թէ՛ նոր եւ թէ՛ գործածուած կարի մեքենաներ ամեն տեսակէ, միշտ առաջնակարգ քաղաքացիներու ապրանքները ընտրելով
կը գնէ կամ նորերու հետ կը փոխանակէ կարի հին մեքենաները :
Նորոգութեան համար երբ պէտք ըլլայ՝ յաճախողաց տուները կայցելէ եւ իր կատարած նորոգութիւնները տարիներու համար կ'երաշխաւորէ :
Կը վաճառէ նաեւ ամեն տեսակ կազի վառարաններ եւ առանց նորոգութիւնները կ'ընէ անմրցելի յաշուութեամբ եւ զիւրազանի : Իրեն
զիմող բոլոր յաճախորդներն ալ գոհ պիտի մնան :

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻՎԱՐԲԵՐՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՂՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՔԱՐԻ

ՅԱՏԿԱՆՆԵՐ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀՆԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Ներդրական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հաս ու հոն ժամականութեամբ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատներին .

Պարական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու աժանութեամբ, տեսակներու բազմադրձութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անտրտելի ապացոյցներէ՛ մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրոտօ օրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԻԹԵԱՆ ԵՂՔԱՐԻ

կոսին անուշով Եղիշէ Թորոսեանին տունն ու տեղը քար ու քանդ ընելու համար, որպէսզի Հոգեւոր, Ս. Ղևոնդ Եպիսկոպոս Շիշմանեանի ձեր ստորագրութեամբ իսկ հաստատուած սպաննութիւնը . . . ծածկուի . . . (Ականջները խօսին Եղիպտոսի Առաջնորդ Աղա Նուրիին, փոխանորդ Տէր Յարութիւնին, գրագիր Նազարէթին, Աւանան Քաղաքական Ժողովին ու անոնց սինըբր հետեղներուն) .

Փութացէ՛ք Մանաւեան, փութացէ՛ք, ձեզի պէս պատուաւոր մարդիկը, երկու ամիս չէ՛ վայրկեան մը իսկ պէտք չէ որ կարճընդունեն . Մենք այդ բանին չափազանց նախանձախնդիր ըլլալու համար, ինչպէս կը տեսնէք, ձեր նամակը ստանալուս պէս անկողնունակայտէն հրատարակելնք . Ասկէ վերջ է որ ձեր խօսքերուն արժէքը կը շեղուի արտի յաջողիք .

ԱՂՔԱՐԻ ԵՂՔԱՐԻ

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ

Վարչութեան երկու անդամներուն հետ, Ս. Պատրիարքը Առանայի վերաբերեալ խնդիրներու համար մեծ եպարքոսին հետ տեսակցած է . Սոյն տեսակցութենէն լաւ արդիւնքներ կը յուսացուին .

Ջիւնիո՛ր Արքեպիսկոպոս Ներքին գործոց նախարարութեան պաշտօնարանը, կը գրէ Արեւելի, քանի մը օրէն պիտի պատրաստէ զինուորական ծառայութեան տարբեր մէջ եղող ոչ-խուլաններուն ցուցակները և պիտի յանձնէ պատերազմական նախարարութեան . Անոնք որ 1299, 1300 և 1301 թուականներուն ծնած են, «ԻՅԹ» ամիս կարգը պիտի մտնեն . Իսկ 1302, 1303 և 1305ին ծնածներն ալ զինուորական գործոն ծառայութեան մէջ պիտի մտնեն . 1305 ին ծնածները երբ պէտք ըլլայ, այն ատեն միայն զինուորութեան պիտի առնուին . Ջիւնուորական ծառայութեան տեղ արուելիք գրամական հատուցումը յիսուն սկի է, նաև երբք ամիս մարզանք պիտի կատարեն .

ՄԻՒՇԵՂ ԵՂԻՍԿՈՊՈՍ

Պատրիարքարանէն հեռագրուած է Մուշեղ Եպիսկոպոսի թէ՛ Պոսթօնի եկեղեցիին քարոզչութիւնը, զոր իրեն առաջարկած էին .

վաւերացնելու գործը կը վերաբերի ամենայն Հայոց Հայրապետին և Կիլիկիոյ Կաթողիկոսին, և Կեդր. վարչութիւնը այդ մասին անօրինութիւն չի կրնար ընել .

ՀԵՌԱՊԵՐ

Կ. Պոլիս 2 Սեպտ. - Սուրբ Աննա Պրուսա գիւց, ուր խանդավառ ընդունելութիւններ կը տեսնուին .

Կ. Պոլիս 3 Սեպտ. - Քուրթ կանոնաւոր զօրքերը մեծ կորուստներ տուած են Եմէնի մէջ . սպասակալ շարժումը վստահաւոր կերպով կը ծառայի .

Կ. Պոլիս 3 Սեպտ. - Տերուքանց դեսպաններուն պնդումին վերայ, քուրթ կառավարութիւնը ամեն կողմ խիստ հրահանգներ տուած է, Յունացի դեմ հրահանգուած պոյժօրը դադարեցնելու համար .

Կ. Պոլիս 4 Սեպտ. - Վեհ. Առաքիւն Պրուսայի Այոյ մզկիթին մէջ աղօթից .

Այցելեց հայոց քաղերը . որ որոշագործուած էին . Հայ ուսանողներ խանդավառ ցոյցեր քրիմ փողոցներուն մէջ .

Սուրբանք տեղական արտադրութեան ցուցանակները այցելեց .

ԱՐՄԵՆԻԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ

Բաժանորդագրութիւն

Պոստը համար տարեկան	80	դր.
Գաւառաց	108	"
Օտար երկիրներու	35	ֆր.

Հասցէ
Direction du Journal Arm
« AREVELK »
Calata Constantinople

ԱՂՔԱՐԻ ԵՂՔԱՐԻ

ՕՐԱԹԵՐԹ

Բաժանորդագրութիւն

Պոլիս տարեկան	75	դր.
Գաւառները	100	դր.
Արտասահման	25	ֆր.

Հասցէ
Rédaction du Journal Arm
« AZATAMART »
PéraYéni-tchare hi 32
Constantinople


ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄՐԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԻՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն . Պրիմօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաթէ Տը Լա Պուրօի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Այլարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԿԸՐԻՆԻՆ ԵՆ Եւ ասոնցով մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է .



400 և ավելի փոյնային եւ մեքանիկական վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ.

ԱՄԵՆԻՆ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
Փարիզի 1900 ի Տիկտերակամ արուեստանախիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԿՈՒՆԻԿԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ՊՅԻՊԱԿԱՆ ՏԱՆ

Չրի դասեր և նորոգումներ, ՍԻՆԿԸՐԻ մեքենաները, յից համար, յաճախորդատուներուն մէջ .

Վճարմանց գիւրուածիւն

Փոխանակութիւն հիւնարու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

Կինը զարմացնող . ուղարկութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԸՐԻ յաւանդելիս

Կինը զարմացնող

ԾԱԽՈՒ ԳԵՏԻՆ

ՇԱՀԱՔԵՐ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ ՄԸ

Մէնչիթ-Էլ-Սաորի կայարանէն ճիշդ երեք վայրկեան հեռաւորութեան վրայ, օդատուն՝ և երկու կողմերը ընդարձակ խճուղիներ շինուած, չրամարտով միասին, հինգ կտոր ծախու գետին կայ, որոց տարածութիւնն է .

ԸՍՏ ԲԱՄԻՆ

Թիւ	Յ քառ. մէթր.	1079,18	սանդ.
56	"	1075,85	"
61	"	1098,87	"
66	"	1127,79	"
71	"	1146,82	"

Թէ՛ միանուագ և թէ՛ մաս առ մաս գնել փախարոյնը՝ հարկ եղած մանրամասնութեանց ծանօթանալու համար, ամէն օր կէս օրէն մինչև ժամը մէկ, կրնան դիմել Արշալոյսի Տպարանը, Շարա Ապտ-էլ-Ազիզ, Շէրիֆ բաշայի պարտաւճիւրի դիմաց .

Կինը գիւրամատչելի է .

ԲԱՅ ՆԱՄԱԿ
« Արշալոյս » ի բաժանորդներուն կը խնդրուի մեր մինչև ցարդ չ'վճարող բայց յարգելի բաժանորդներէն, որպէսզի բարեհաճին առանց մեր ուղղակի դիմումին սպասելու, իրենց բաժնեգրիները լրիւլ

Rédaction du Journal ARCHA-LOUYCE հասցէով .

ԳԻՒՐՈՒԹԻՒՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆ

Այլ հոգ մի՛ ընէք թէ՛ ձեր կարի մեքենաները Շախայի մը գլխուն վրա դրած հոս ու հոն պիտի փոխադրէք նորոգելու համար .

Պ. Սարգիս Թաշեան՝ իրեն գիմող շատ մը յաճախորդներին քաջալերուած, ատենէ մը ի վեր իր պաշտօնը թողլով, յատուկ կտրու պատրաստած է եւ իր շրջուն ու շարժական խանութը «Վարոն» ու չորս պզտիկ ձիւն անուրն է) բարձած ամէն թողէ կանցիլ ամէն օր եւ ամէն ժամ .

Ձիւնը ծանփալու դժուարութիւն չկայ . Պարիկ ձիւն մը քաջած կառքին երբ մեքենաներու գործիքներ տեսնէք, որուն չորս կողմը ամեն լիզուով գրուած է, մանուանդ Réparation des Machines, անմիջապէս կամ «Վարոն» յիշեցէք, և կամ քիչ մը անդին Սարգիս Թաշեանը տեսնելու ուղեցէք, իր կապոյտ կտուէրով յիշելու մէջ, անիկայ ոչ միայն կարի մեքենաներու նորոգութիւն կընէ անմասն յաջողութեամբ և երաշխաւորեալ, այլ և նոր մեքենաներ ալ կը հայթայթէ .

Չ'մոռնա՛ք նաև կազմ վաճառաներու և ֆոֆօկարֆուերու նորոգութիւնը և նորերու հայթայթումը .

Պ. Թաշեան այս գիւրութիւնները ընծայելով, իր նմաններուն ծառայած ըլլալու գոտուանակութեամբ պիտի ունենայ, և քիչ մ'ալ դրամ շահիլ պիտի ուզէ, իր պիտիութիւններուն զատարակութեամբ յաւանդելու համար .